

Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի 2016 թ-ի հոկտեմբերի 5-ին կայացած գիտական խորհրդի նիստի

Օրակարգում՝

1. Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի մագիստրոսական կրթական ծրագրերի ստեղծման առաջարկ- հայտերի հաստատման և ներկայացման մասին:

2. 2016-2017 ուստարվա բակալավրիատի և մագիստրատուրայի համապատասխան ծրագրերով ընդունելության մասին / առկա, հեռակա ուսուցում/;

3. 2015-2016 ուստարվա 2-րդ կիսամյակի լուծարքային շրջանի արդյունքների ամփոփում / առկա, հեռակա/;

4. Հաղորդում ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման կրթագիտական ծրագրի / 2011-2016 թթ./ կատարման և առաջիկա անելիքների մասին: Զեկուցող՝ ֆակուլտետի պատասխանատու դոց. Ա. Ղարաբուլյան;

5. Ընթացիկ հարցեր:

1. Լսեցին՝ մագիստրասական ծրագրերի ստեղծման առաջարկների մասին հարցը:

Դեկան Ա. Բաղդասարյանը ներկայացրեց ամբիոնների առաջարկած ծրագիր- փաթեթները:

Արտահայտվեցին՝ Գ. Պետրոսյանը, Ն. Խաչատրյանը, Ա. Մանասյանը:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն և նշված ժամանակահատվածում ներկայացնել ծրագրերը:

2. Լսեցին՝ 2016-2017 ուստարվա բակալավրիատի և մագիստրատուրայի ընդունելության մասին հարցը:

Արտահայտվեցին՝ Դեկան Ա. Բաղդասարյանը նշեց քննության օրերը և ներկայացրեց ամբիոնների կողմից նորացված ծրագրերը:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն:

3. Լսեցին՝ 2015-2016 ուստարվա 2-րդ կիսամյակի լուծարքների արդյունքների ամփոփման մասին հարցը;

Արտահայտվեցին՝ Բոլոր ամբիոնների վարիչները ներկայացրեցին իրենց ամբիոնների արդյունքները:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն:

4. Լսեցին՝ պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման կրթագիտական ծրագրի կատարման և առաջիկա անելիքների մասին հարցը:

Արտահայտվեցին՝ Ֆակուլտետի պատասխանատու դոց. Ա. Ղարազուլյանը ներկայացրեց ֆակուլտետի դասախոսների մասնակցությունն այդ ծրագրին, որը բավականին դրական է: Ա. Ղարազուլյանը ներկայացրեց նաև նոր դասընթացների ծրագրերը:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն:

5. Ընթացիկ հարցեր:

Նիստի նախագահ՝ Ա. Բաղդասարյան

Նիստի քարտուղար՝ Ս. Սարգսյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 2

Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի 2016 թ-ի նոյեմբերի 3-ին կայացած ընդլայնված խորհրդի նիստի

Օրակարգում՝

1. Ֆակուլտետի դեկանի 2015-2016 ուստարվա աշխատանքների հաշվետվությունը:

Նիստի աշխատանքներին ներկա էր ԵՊՀ ռեկտոր Ա. Սիմոնյանը:

Նիստի նախագահող Հ. Ավանեսյանը դրեց հաստատման օրակարգը:

Արտահայտվեցին՝ Դեկան Ա. Բաղդասարյանը ներկայացրեց ֆակուլտետի մեկ տարվա աշխատանքի հաշվետվությունը: Նշված տարում ֆակուլտետն աշխատել է բավականին հազեցած ծրագրով: 2015-2016թթ. տեղի են ունեցել միջազգային 4 գիտական կոնֆերանսներ, որոնց մասնակցել են գիտնականներ Ռուսաստանից, Գերմանիայից, Անգլիայից, ԱՄՆ-ից: Տպագրվել են նյութերի ժողովածուները: Հաշվետու տարում աշխատանքներն իրականացվել են՝ համապատասխան ԵՊՀ-ի ռազմավարական ծրագրերի:

Ելույթ ունեցան՝ պրոֆ. Ս. Զաքարյանը, պրոֆ. Գ. Շահվերդյանը:

Որոշեցին՝ Ֆակուլտետի դեկանի մեկ տարվա աշխատանքը գնահատել դրական:

Ռեկտոր Ա. Սիմոնյանը ներկայացրեց ԵՊՀ ռազմավարությունը և պատասխանեց ներկաների հարցերին:

Նիստի նախագահ՝ Հ. Ավանեսյան

Նիստի քարտուղար՝ Ս. Սարգսյան